

դին: Շխտակ ընթերցումն է ostan: Յայտնի ուստա ‘վարպետ’ բառը գրուում է պարսկերէնն asta եւ astad եւ կարդացուում է osta եւ usta:

Վուլլերս եւս դիտէ astan բառը որպէս locus dormiendi կամ quiescendi, այսինքն ննջելու կամ հանգչելու տեղ եւ համարոււմ է ծագած ust բառից, որ է ազդը, որով ustan իբրեւ ‘a supino cubitu derivata’: Ստուգաբանութիւնը թէեւ կասկածելի է, բայց կարեւոր է այնու, որ astan հանելով ust-ից հաստատոււմ է նոյն բառի ustan հնչիւնը:

Նոյնը վկայոււմ է մանաւանդ ասորի austn գրութիւնը, որ եւ հիմ է տալիս բառի ստուգաբանական վերլուծման: Հաւանօրէն stana ‘տեղ’ բառն է սկզբից անանցուած մի մասնիկով, որ նախդիր է, թերեւս au, avi. շաղկապուելով stana յայտնի բառի հետ, տալիս է նրան ‘մուտքի, շեմի, դրան’ իմաստ:

Թողնելով մանրամասնիքը հրատարակելի Ստուգաբանական Ուսումնասիրութիւններ աշխատութեանս մէջ, բաւականանանք այսքանով:

Պարսիկ astan բառը ոչ միայն ‘տեամ, դուռն’ է նշանակոււմ, այլ եւ ‘արքայական դուռն’: Այս իմաստը եւ գործածութիւնը պահել է անգամ օսմանեան լեզուի մէջ: Բարձրագոյն դուռը կոչոււմ էր բարձր ոճով astan կամ astan — i — saadet եւ նման ծաղկուն մակերիւնքով: Այս մասին վկայոււմ են դարձեալ նոյն Ջոնսոնի եւ ուրիշ բառգիրքեր:

Ակներեւ է որ բառս իրանից է անցել Օսմանեան դուռը: Ասել է թէ ատենով կենդանի խօսք է եղել Իրանում եւ նշանակել է նաեւ կամ առաւելապէս արքայական եւ իշխանական արքունիք:

Իրանից անցել է հայերին ոստան հարազատ հնչիւնով եւ նշանակել է արքունի դուռն:

Պ. Մանանդեանը առնուազն անզոյժ է, երբ յայտարարոււմ է, որ հայ մատենագիրները քրքրելով հետք անգամ չէ գտել, որ ոստան նշանակէր դուռն:

Մեր այն աշխատութեան մէջ, որ քննադատոււմ է պ. Մանանդեանը, բերել ենք զինուորական կոչուած զահամակը, հետաքրքրական գործ, հայ զինուորական ոյժերին նայող: Այնտեղ նշանակուած է, թէ որ նախարարա-

կան տուն որքան հեծեալ ունէր: Վերջում կարգոււմ ենք. «եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք ՅԴ-ից հազարաց, թող զսպասաւորս դրանն արքունի որ է ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի, եւ մարդպետական որ է ներքինի պահապան ի վերայ թագուհուոյն եւ դանձուցն. եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց որ է հարիւր եւ քսան հազարաց»:

Ահա մի կարեւոր վկայութիւն, որ ոստանն է արքունի դուռն:

Յիշատակարանը որոշոււմ է երեք տեսակի զօրք՝ նախարարական թուով 84 հազար, սպասաւորներ դրանն արքունի որ է ոստանդ, որոնք պատերազմ էին ելնում թագաւորի հետ, ասել է թէ արքայական զօրք է, եւ վերջապէս մարդպետական կամ թագուհու պահապան զօրք: Պորենացին ծանօթ է եղել այս յիշատակարանին եւ այդ մասին պարագայօրէն խօսած ենք Հայաստանը Յուստինիանի դարոււմ դործիս մէջ:

Հարկ ենք համարոււմ շեշտել, որ որ է ոստանդ վերաբերոււմ է նախընթաց դրանն արքունի խօսքերին եւ ոչ թէ սպասաւորներին, որոնց նայոււմ է որք ելանէին եւայլն նախադասութիւնը:

Այսպիսով մեր մեկնութիւնը հաստատոււմ է ոչ միայն ստուգաբանօրէն, այլեւ մատենագրական նեցուկով, հակառակ պ. Մանանդեանի հապճեպ յայտարարութեան:

Ոստան բառի տեսակ տեսակ կիրառումները գտնոււմ են իրենց բանալին: Ոստան կարող էլ լինել եւ Վրկանում եւ Մժրնում, այլ եւ Պորասանի եւ Բաղդադի կողմերում — այս մասին եւս կան տեղեկութիւններ—, ինչպէս եւ Հայաստանի ոչ միայն թագաւորական, այլ եւ ամէն մի իշխանական նստավայր կարող էր ոստան կոչուել: Ասորի austan իրաւամբ Շարօ թարգմանոււմ է residence de la dynastie:

Հասկանալի է դառնում եւ «յոստան ունել» ասացուածքը որպէս «յարքունիս ունել»:

Վերջապէս, Արշակունիների արքունիքն ու աթոռանիստը, գուցէ եւ կալուածը համարոււմ է ոստան par excellence:

\* \* \*

Անցնենք ոստանիկ-ին: Կապը ոստանի հետ